ArmLur.am

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

I SSN 1829-2763

5 մարտի հինգշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

23
(3232)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## ՉԿՆԳՈՂ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ ՀԱՐՍՏԱՆՈՒՄ Է



«Ժողովուրդ» օրաթերթը գրում է. «Իշխանական մեծամասնության ներկայացուցիչ Նարեկ Գրիգորյանի վերջին չորս տարվա հայտարարագրերը ոչ թե պարզություն են մտցնում նրա ֆինանսական դրության վերաբերյալ, այլ ստեղծում են մի շարք լուրջ հարցադրումներ:

«Ժողովուրդ» օրաթերթը, ուսումնասիրելով իշխանական պատգամավորի պաշտոնական հայտարարագիրը, պարզեց, որ 4 տարվա ընթացքում՝

- ոչ մի անշարժ գույք,
- ոչ մի նոր ներդրում,
- ոչ մի խոշոր ակտիվ,
- եւ միայն մեկ՝ 2003 թվականի արտադրության VAZ մակնիշի ավտոմեքենա:

Միաժամանակ կանխիկ միջոցները հետեւողականորեն աճել են: Միեւնույն ժամանակ առկա են վարկային պարտավորություններ:

Այսինքն՝ պատգամավորը ունի վարկային բեռ, բայց նրա կանխիկ դրամական միջոցները աճում են: Տնտեսական տրամաբանությամբ՝ վարկ ունեցող անձը սովորաբար ձգտում է նվազեցնել պարտքը, ոչ թե կուտակել մեծածավալ կանխիկ գումար: Այստեղ պատկերը հակառակն է: Սա ոչ թե պարզապես հաշվապահական մանրուք է, այլ ֆինանսական վարքագծի հարց, որը պահանջում է բացատրություն:

Պատգամավորի կնոջ՝ Մարիետա Նիկոյանի հայտարարագրերը եւս պարունակում են հակասական դրվագներ:

***Մանրամասները՝ ArmLur.am կայքում***



Երեկ՝ փետրվարի 4-ին, խորհրդարանում իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունն ընտրեց ԱԺ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահին: ՔՊ-ն այդ պաշտոնում առաջադրել էր պատգամավոր Վանիկ Օհանյանի թեկնածությունը: Վերջինս խորհրդարանում հայտնվելուց ի վեր չի թաքցրել, որ ցանկանում է գլխավորել հենց այս հանձնաժողովը: 107 պատգամավորից փակ, գաղտնի քվեարկությանը մասնակցել է 64-ը, անվավեր քվեաթերթիկներ չեն եղել, կողմ՝ 64, դեմ՝ 0: 44-ամյա Վանիկ Օհանյանը ծնվել է Վանաձորում, ավարտել է Երեւանի պետական բժշկական համալսարանի ստոմատոլոգիական ֆակուլտետը: Մինչ քաղաքական գործունեությունը ղեկավարել է բժշկական հաստատություններ եւ հիմնել սեփական ստոմատոլոգիական կենտրոնը: «Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է պատգամավորի հայտարարագիրը:

⇨ *էջ 3*



Քրեական ոստիկանության Լոռու մարզային վարչության ծառայողները ստացել էին օպերատիվ տեղեկություն, որ Վանաձորի բնակիչ երկու եղբայր ստեղծել են հանցավոր կազմակերպություն, ներգրավել հիմնականում համաքաղաքացիների, բաշխել յուրաքանչյուրի դերը եւ արդեն երկար ժամանակ Լոռու մարզում ու հանրապետության այլ վայրերում ծրագրել եւ կատարել են ավազակություններ, բնակարանային գողություններ, այլ հանցագործություններ: Հետագա միջոցառումների արդյունքում մարտի 3-ին ստացվեց նոր տեղեկություն, որ հանցավոր խմբի անդամները երկու մեքենայով, զինված ռադիոկապի միջոցներով, դուռ ու լուսամուտ բացելու գործիքներով մեկնել են Սպիտակ համայնքի Արջիովիտ գյուղ՝ բնակարանային գողության: Հետագա գործողությունները քրեական ոստիկանները կատարեցին մարզի պարեկների, Համայնքային ոստիկանության Տարոնի ու Բագումի ծառայողների հետ համագործակցությամբ:

***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում***



Քրեական ոստիկանության Արմավիրի մարզային վարչությունում ստացված օպերատիվ տեղեկությունը ընդերքի պահպանման կամ օգտագործման պահանջները խախտելու վերաբերյալ էր: Մարզի քրեական ոստիկանները ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ էին ձեռք բերել, որ սահմանափակ պատասխանատվությամբ մի ընկերության իրավասու անձինք, խախտելով ընդերքի պահպանման եւ օգտագործման կանոնները, Երվանդաշատ բնակավայրի բազալտի հանքավայրի հարակից տարածքում իրականացրել են տուֆ քարի ապօրինի արդյունահանում եւ իրացրել ֆիզիկական ու իրավաբանական անձանց, ինչի արդյունքում պետությանը եւ համայնքին պատճառվել է գույքային վնաս: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում հանքավայրի 6 աշխատակից ձերբակալվել եւ տեղափոխվել են Քրեական ոստիկանության Արմավիրի մարզային վարչություն: Ապօրինի արդյունահանված հանքանյութով բեռնված երեք բեռնատար տեղափոխվել է վարչության պահպանվող հատուկ տարածք: Կազմված փաստաթղթերը փոխանցվել են նախաքննական մարմին:

ԶՐՈՒՅՑ

# ՍԱՀՄԱՆԻՆ ՆՈՐ ՌԻՍԿԵՐ

**ArmLur.am-ը զրուցել է ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գառնիկ Դանիելյանի հետ՝ կապված ներկայիս վիճակի հետ՝ Իրան-Իսրայել-ԱՄՆ բախումը ինչքանով կարող է վտանգ ներկայացնել եւ ինչպես կարող է այն անդրադառնալ Հայաստանի վրա:**

**-Պարո՛ն Դանիելյան, այս օրերին տեսնում ենք՝ հարեւան Իրանում ինչ է տեղի ունենում, սա ինչպե՞ս է անդրադառնում Հայաստանի վրա, ի՞նչ ռիսկեր եք տեսնում:**

-Նախ ասեմ, որ Իրանը մեր ավանդական բարեկամ դաշնակից երկիրն է, 90-ական թվականներից գիտենք, որ շրջափակման տարիներին Իրանը շատ կարեւոր նշանակություն է ունեցել Հայաստանի տնտեսության, անվտանգության առումներով, եւ իհարկե մեզ համար շատ ցավալի են այն իրադարձությունները, որ կատարվում են Իրանում, եւ այդ ֆոնին մենք տեսնում ենք իշխանությունների անհոգ եւ ուրախ շրջագայությունները, պերաշկի-կուկուրուզ օպերացիան: Մենք տնտեսական թելերով կախված ենք Իրանի Իսլամական Հանրապետության հետ, եւ այս առումով սահմանին տիրող իրավիճակը կարող է լրջագույն ազդեցություն ունենալ մեր տնտեսության վրա, եւ ոչ միայն տնտեսության, այլեւ անվտանգային առումով, եթե տարածաշրջանը եռում է, Հայաստանն էլ, բնականաբար, ցավոք սրտի անմասն չի կարող մնալ: Այսինքն՝ այն հետեւանքները, որ կան տարածաշրջանում, դա, բնականաբար, ազդելու է Հայաստանի վրա: Իսկ եթե վիճակը դառնա արդեն անկառավարելի, սահմանին, բնականաբար, հարյուր հազարավոր մարդիկ փորձելու են պատերազմի ընթացքում լքել Իրանը, եւ այդ առումով Հայաստանի սահմանների հետ կապված լրջագույն խնդիրներ կան: Այդ խնդիրների կարեւորությունը ու բարդությունը, կարծում եմ, իշխանությունները չեն պատկերացնում, բազմաթիվ անգամներ այդ հարցը բարձրացրել ենք, որ կան ռիսկեր՝ հնարավոր պատերազմի դեպքում ներհոսքի հետ կապված եւ այլ խնդիրներ:



**-Պարո՛ն Դանիելյան, իշխանությունն էլ իրենց լռությունը պայմանավորում է նրանով, որ Հայաստանում խաղաղություն է, Տարոն Չախոյանը իր ֆեյսբուքյան էջում մեկնաբանել էր այն, որ ընդդիմությունը լավ չի ընդունում այն հանգամանքը, որ Հայաստանում խաղաղություն է եւ չի հարմարվում այն ամենի հետ, որ Հայաստանը պատերազմի մեջ ներքաշված չէ, այս մասով ի՞նչ կասեք:**

-Մասնավորապես «Հայ հեղափոխական դաշնակցությունը» իր նվիրյալ կուսակցականների շնորհիվ մասնակցել է տարբեր պատերազմների, ասել, որ մենք ուզում ենք պատերազմ, դա տգիտություն է: Այսինքն՝ մեր լավագույն ընկերները իրենց կյանքը դրել են հենց Հայաստանի Հանրապետության պաշտպանության եւ անվտանգության համար, իրենք բունկերների ծակերն են մտած եղել այդ ժամանակ, մենք ամենաշատն ենք ուզում խաղաղություն: Խնդիրը նրանում է, որ հնարավոր էսկալացիայի պարագայում մեր ինստիտուտները պատրաստ չեն, իմ գնահատմամբ, դիմակայելու այդ մարտահրավերներին, հիշեցնեմ, որ մինչեւ 2020 թվականն էլ մինչ 44-օրյա պատերազմը, ասում էին՝ սահմանին կրակոցներ չեղավ, մենք տեսանք՝ ինչ եղավ դրանից հետո: Այսինքն՝ կրակոցներ չլինելը կամ ժամանակավոր իրադադարը դա դեռ երաշխիք չէ հնարավոր պատերազմի: Եւ այս առումով իրենք կրկին իրենց դիլետանտությամբ, իրենց մանիպուլյացիայով պարբերաբար մոլորության մեջ են փորձում գցել մեր հայրենակիցներին՝ ասելով, որ խաղաղությունը հաստատված է: Շատ ժամանակ քեզանից էլ չի կախված այդ պատերազմը, բայց այն, որ դու պետք է ամեն ինչ անես, որպեսզի այդ պատերազմը կանխելու, հնարավոր ռիսկերը կառավարելու կարողություն ունենաս, բայց այդ ունակությունները այս իշխանությունը չունի:

*Զրուցեց ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ*

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

## ԴԱՏԻ Է ՏՎԵԼ ՕԳՏԱՏԻՐՈՋԸ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ ԱԺ նախագահի Ալեն Սիմոնյանը դատի է տվել ֆեյսբուքյան օգտատեր, բլոգեր Մանուել Մանուկյանին:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ Սիմոնյանը պահանջում է, որպեսզի Մանուկյանը հրապարակային ներողություն խնդրի: Մասնավորապես, վերջինս իր ֆեյսբուքյան էջում պետք է հրապարակի հետեւյալ հայտարարությունը.

«Ես՝ Մանուել Մանուկյանս, ներողություն եմ խնդրում Ալեն Սիմոնյանից»:

Հայցադիմումում նշվում է, որ Մանուկյանը «Հոգին մարմնի դիմաց» վերնագրով գրառում է կատարել, որը վերաբերում է Սիմոնյանին: Ըստ հայցի՝ հրապարակումը պարունակում է Սիմոնյանի հասցեին վիրավորական արտահայտություններ:

Սիմոնյանը պահանջում է 900.000 դրամ՝ վիրավորանքի փոխհատուցման համար, 100.000 դրամ՝ զրպարտության համար: Բացի այդ, նա պահանջել է նաեւ 550.000 դրամ դատական ծախսերի փոխհատուցում՝ ներառյալ փաստաբանի վարձատրությունն ու պետական տուրքը:

Ընդհանուր պահանջը կազմում է 1 միլիոն 550 հազար դրամ:

Դատարանը փետրվարին հայցը վարույթ է ընդունել: Նիստի օր դեռ նշանակված չէ:

*Ս. Գ.*

## ՎԵՐՋԻՆ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ

ԱՄԷ-ում ՀՀ դեսպանությունից տեղեկացնում են, որ այն քաղաքացիները, ովքեր արդեն ունեն եւ ձեռք կբերեն Fly One ընկերության կողմից մարտի 5-ին՝ երեկոյան ժամը 21:00-ին կայանալիք Մասկատ-Երեւան տոմսերը, կարող են օգտվել ԱՄԷ-ում ՀՀ դեսպանության եւ Դուբայում ՀՀ գլխավոր հյուպատոսության կողմից կազմակերպված ՎԵՐՋԻՆ ԱՆՎՃԱՐ տեղափոխման հնարավորությունից:

«Նշենք նաեւ, որ Մասկատ-Երեւան թռիչքի տոմսերը կարող եք ձեռք բերել՝ զանգահարելով հետեւյալ հեռախոսահամարներին՝ +37433309013 կամ +37494366540:

Տեղափոխման ցանկություն ունեցող քաղաքացիներին խնդրում ենք անհատապես գրանցվել հետեւյալ հղումով՝ մինչեւ երեկոյան ժամը 20:00-ն:

Ավտոբուսների շարժման վայրի տվյալները՝

Աբու Դաբի - ԱՄԷ-ում ՀՀ դեսպանության տարածքից (President Joko Widodo str. 63)՝ մարտի 5-ին՝ ժամը 06:00-ին, ուղեւորների հավաքի ժամը՝ 05:30-ին:

Դուբայ՝ ՀՀ գլխավոր հյուպատոսության տարածքից (GoldCrest Executive Tower, JLT, Cluster C) մարտի 5-ին՝ ժամը 06:00-ին, ուղեւորների հավաքը՝ ժամը 05:30-ին:

Խնդրում ենք բացառապես գրանցվել այն քաղաքացիներին, ովքեր արդեն ունեն մարտի 5-ին կայանալիք Մասկատ-Երեւան թռիչքի հաստատված տոմս:

Խնդրում ենք նաեւ հաշվի առնել, որ Աբու Դաբիից եւ Դուբայից մինչեւ Մասկատի օդանավակայան ճանապարհի տեւողությունը կազմում է մոտավորապես 10-12 ժամ»,-ասվում է հաղորդագրությունում:

## ՔՆՆԱՐԿՈՒՄ

Տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեի առանձնազրույցը:

ՀՀ վարչապետի աշխատակազմից հայտնում են, որ զրուցակիցները քննարկել են երկկողմ ռազմավարական հարաբերությունների օրակարգին առնչվող հարցերի լայն շրջանակ:

Կարեւորվել է առեւտրատնտեսական համագործակցության հետեւողական զարգացումն ու ընդլայնումը: Այդ համատեքստում ընդգծվել է Հայաստանի Հանրապետության եւ Վրաստանի միջեւ տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 15-րդ նիստի անցկացումը: Կողմերը համոզմունք են հայտնել, որ այն նոր ազդակ կհաղորդի երկկողմ փոխգործակցության ամրապնդմանը տարբեր ոլորտներում:

Զրուցակիցները մտքեր են փոխանակել նաեւ տարածաշրջանային նշանակության մի շարք հարցերի շուրջ: Կարեւորվել է տարածաշրջանում խաղաղության եւ կայունության ապահովմանն ուղղված քայլերի շարունականությունը:

## ԲԱՆԱԿԻ ԱՄՐԱՑՈՒՄԸ

«Մենք մեր զինված ուժերի եւ բանակի ամրացման աշխատանքներում, իհարկե, համագործակցելու ենք, կարեւոր ենք համարում Ամերիկայի Միացյալ Նահանգների, նաեւ Ֆրանսիայի գործընկերների հետ համագործակցությունը»: Այս մասին մարտի 4-ին՝ մամուլի ասուլիսի ժամանակ, նշեց «Միասնության թեւեր» քաղաքական նախաձեռնության ղեկավար Արման Թաթոյանը՝ հավելելով, որ դրանով կարող են ապահովել մեր բանակի ժամանակակից մոբիլությունը, բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված տեխնիկայի տեղակայումը:

Նա ցույց տվեց ՔՊ-ի քարոզարշավի լուսանկարները, որտեղ պատկերված են վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ՊՆ նախարար Սուրեն Պապիկյանը, եւ ասաց. «Այսքան անվտանգության մարտահրավերների պայմաններում սա մեր պաշտպանության նախարարի պաշտոնում աշխատող մարդն է, որ հելել, գնացել է ներկուսակցական քարոզարշավի: Այս մարդը այստեղ կուկուռուզ ուտող Նիկոլ Փաշինյանն է, որը աշխատում է ՀՀ վարչապետ: Երբ այս լուսանկարները տեսա, մտածեցի, որ շատ լավ վերադառնում են իրենց նախկին դիրքերին: Իրենք նախկինում էլ են եղել այս կարգավիճակում, եւ հիմա ինձ թվում է՝ նաեւ բնազդային ձեւով նրանք վերադառնում են իրենց նախկին այն կարգավիճակին, որ միշտ եղել են»:

Արման Թաթոյանը նկատեց, որ եթե չեղավ անվտանգություն, որեւէ բան չենք կարող ունենալ. «Չենք կարող ունենալ գյուղատնտեսություն, ապահով կյանք, նորմալ զարգացող տնտեսություն, նորմալ զարգացող բիզնես, աշխատավայրեր եւ այլն: Մենք այսօր տեսնում ենք, որ մեր անվտանգությունն ամբողջությամբ խաթարված է, մեր բնակչության բնականոն կյանքը: Որեւէ բան հնարավոր չի, եթե մենք ունենք անվտանգության համակարգի այս աստիճան խաթարված վիճակ»:

## ՀԵՌԱՑԵԼ ԵՆ

Մերձավոր Արեւելքից 9000 ամերիկացի կարողացել է դուրս գալ փետրվարի 28-ին Իրանի դեմ Իսրայելի եւ ԱՄՆ-ի ռազմական գործողությունների մեկնարկից ի վեր: Այս մասին հայտարարել է ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոն մամուլի ասուլիսի ժամանակ:

«Կա եւս 1500 ամերիկացի, որոնք խնդրում են օգնել մեկնման հարցում», - Ռուբիոյի խոսքերն է մեջբերում ԱՄՆ պետքարտուղարությունը:

Նրա խոսքով՝ ԱՄՆ-ն դիտարկում է երկրի քաղաքացիներին չարտերային, ռազմական եւ կոմերցիոն թռիչքների միջոցով տարհանելու տարբերակները: Ռուբիոն նաեւ հայտնել է, որ ներկա իրավիճակում եղել են նաեւ դեպքեր, երբ ինքնաթիռն օդում է եղել, սակայն օդային տարածքը փակվել է, եւ այն ստիպված է եղել վերադառնալ: Թռիչքների հետ խնդիրներ են առաջանում նաեւ օդանավակայանների թիրախավորման եւ փակման պատճառով:

Նա նշել է նաեւ, որ ամերիկյան դեսպանատները եւ դիվանագիտական ներկայացուցչությունները գտնվում են Իրանի կողմից ուղիղ հարվածների տակ: Դրանցից շատերից անձնակազմը նախապես հեռացվել է: Տարածաշրջանային երկրներում որոշ դիվանագիտական ներկայացուցչություններ էլ դադարեցրել են աշխատանքը:

## ԱՎԻԱՆԻՐԸ ՈՒՂԱՐԿԵԼ Է

Մերձավոր Արեւելքում տիրող իրավիճակի պատճառով Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը հրամայել է «Շառլ դը Գոլ» միջուկային ավիակիրը եւ դրա հարվածային խումբը դուրս բերել Բալթիկ ծովից եւ տեղակայել Միջերկրական ծովում: Այս մասին հաղորդում է France 24 պարբերականը՝ վկայակոչելով Մակրոնի ուղերձը ժողովրդին:

«Հաշվի առնելով այս անկայուն իրավիճակը եւ առաջիկա օրերի անորոշությունները՝ ես հրամայել եմ, որ «Շառլ դը Գոլ» ավիակիրը, դրա օդային միջոցները եւ ուղեկցող ֆրեգատը նավարկեն դեպի Միջերկրական ծով», - ասել է Մակրոնը մարտի 3-ի երեկոյան հեռարձակված հեռուստաուղերձում:

Նա նաեւ նշել է, որ վերջին մի քանի ժամվա ընթացքում Մերձավոր Արեւելքում տեղակայվել են Rafale կործանիչներ, հակաօդային պաշտպանության համակարգեր եւ օդային ռադարային համակարգեր:

Այս որոշման պատճառ է հանդիսացել մարտի 2-ին Կիպրոսում բրիտանական ավիաբազայի թիրախավորումը անօդաչու թռչող սարքերով: Մակրոնի խոսքով՝ Կիպրոսը ԵՄ-ի անդամ է, որի հետ Ֆրանսիան վերջերս ռազմավարական գործընկերության պայմանագիր է կնքել:

ԱՄՆ-ն եւ Իսրայելը փետրվարի 28-ից հարվածներ են հասցնում Իրանին՝ դա անվանելով «կանխարգելիչ» հարձակում: Նրանց պնդմամբ՝ Իրանը զարգացնում էր իր մեծ հեռահարության բալիստիկ հրթիռների ծրագիրը, նաեւ ցանկանում էր միջուկային զենք ստեղծել: Թեհրանը հերքել է մեղադրանքները եւ պատասխան հարվածներ է հասցնում՝ թիրախավորելով Իսրայելը, ինչպես նաեւ Մերձավոր Արեւելքի երկրներում ԱՄՆ-ի ռազմակայանները եւ էներգետիկ օբյեկտները:

ՊԱՇՏՈՆ ԵՎ ՈՒՆԵՑՎԱԾՔ

# ԱԺ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՈՐ ՂԵԿԱՎԱՐԸ

**Երեկ՝ փետրվարի 4-ին, խորհրդարանում իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունն ընտրեց ԱԺ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահին:**



ՔՊ-ն այդ պաշտոնում առաջադրել էր պատգամավոր Վանիկ Օհանյանի թեկնածությունը: Վերջինս խորհրդարանում հայտնվելուց ի վեր չի թաքցրել, որ ցանկանում է գլխավորել հենց այս հանձնաժողովը: 107 պատգամավորից փակ, գաղտնի քվեարկությանը մասնակցել է 64-ը, անվավեր քվեաթերթիկներ չեն եղել, կողմ՝ 64, դեմ՝ 0: Հիշեցնենք, որ Նախկինում այդ պաշտոնում ընտրվել էր ՔՊ-ական պատգամավոր Հռիփսիմե Գրիգորյանը:

44-ամյա Վանիկ Օհանյանը ծնվել է Վանաձորում, ավարտել է Երեւանի պետական բժշկական համալսարանի ստոմատոլոգիական ֆակուլտետը: Մինչ քաղաքական գործունեությունը ղեկավարել է բժշկական հաստատություններ եւ հիմնել սեփական ստոմատոլոգիական կենտրոնը:

«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է պատգամավորի հայտարարագիրը: Ըստ 2024 թվականի տարեկան հայտարարագրի ՝ Վանիկ Օհանյանը Վանաձոր քաղաքում ունի չորս միավոր անշարժ գույք:

- Բնակարան - ձեռք է բերվել 26/10/2015թ., նվիրատվությամբ, միանձնյա սեփականություն:
- Հասարակական նշանակության շինություն - ձեռք է բերվել 18/04/2017թ., գնման եղանակով, միանձնյա սեփականություն:
- Ավտոտնակ - ձեռք է բերվել 01/01/2018թ., գնման եղանակով, միանձնյա սեփականություն:
- Հողամաս - ձեռք է բերվել 12/08/2005թ., գնման եղանակով, միանձնյա սեփականություն:

*Դրամական միջոցներ*

- Բանկային հաշիվների մնացորդ՝ 23,376 դրամ,
- Կանխիկ դրամ՝ 2,500,000 դրամ,
- Կանխիկ արտարժույթ՝ 4,000 ԱՄՆ դոլար:

Հաշվետու տարվա ընթացքում նրա ընդհանուր եկամուտը կազմել է 3,959,590 դրամ: Այդ գումարի մեջ ներառված են աշխատավարձերը «Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ից եւ «Օհանյան Կլինիկա» ՍՊԸ-ից, քաղաքացիա-իրավական պայմանագրից ստացված եկամուտը «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանից, ինչպես նաեւ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից ստացված 1,000,000 դրամ միանվագ վճարը: Բացի այդ, նա նույն տարում ստացել է 1,187,226 դրամ վարկ «Ինեկոբանկ» ՓԲԸ-ից, եւ տարվա վերջի դրությամբ վարկի մայր գումարի մնացորդը կազմել է նույնքան:

Վանիկ Օհանյանը հանդիսանում է «Օհանյան Կլինիկա» ՍՊԸ-ի 100 տոկոս բաժնետերը, սակայն 2020 թվականի դեկտեմբերի 25-ին իր բաժնեմասը փոխանցել է հավատարմագրային կառավարման Մանուշակ Օհանյանին:

«Ժողովուրդ» օրաթերթի ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց նաեւ, որ Օհանյանը հանդիսանում է «Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի տնօրեն եւ Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի խորհրդի նախագահ:

Հայտարարագրի տվյալներում ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ բանկային հաշիվներում առկա միջոցները համեմատաբար փոքր չափի են, մասնավորապես՝

2021 թվականին- 4,350 դրամ
2022 թվականին- 15,000 դրամ,
2023 թվականին- 0 դրամ,
2024 թվականին- 23,376 դրամ,

այն դեպքում, երբ աշխատավարձերն ու այլ եկամուտները ստացվում են անկանխիկ՝ բանկային փոխանցումների միջոցով: Միաժամանակ հայտարարագրված է զգալի չափով կանխիկ գումար՝

2021 թվականին-10,000 ԱՄՆ դոլար, 3,500,000 դրամ,
2022 թվականին-7,800 ԱՄՆ դոլար, 2,500,000 դրամ,
2023 թվականին-6,200 ԱՄՆ դոլար, 2,800,000 դրամ,
2024 թվականին-4,000 ԱՄՆ դոլար, 2,500,000 դրամ,

ինչը կարող է դառնալ հանրային քննարկման առարկա՝ ֆինանսական թափանցիկության համատեքստում:

*ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

## ՆԱԽԱԳԱՀԸ ԸՆԴՈՒՆԵԼ Է

Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանն ընդունել է Միջազգային հանրապետական ինստիտուտի եվրասիական տարածաշրջանի տնօրեն Սթիվեն Նիքսին:

Այս մասին հաղորդագրություն է տարածել ՀՀ նախագահի աշխատակազմը:

Հանդիպմանը նախագահը կարեւորել է Հայաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ համագործակցության շարունակական զարգացումը՝ ընդգծելով Միացյալ Նահանգների կողմից Հայաստանի կառավարության ժողովրդավարական բարեփոխումների օրակարգին ցուցաբերվող հետեւողական աջակցությունը:

Նախագահը մասնավորապես բարձր է գնահատել Միջազգային հանրապետական ինստիտուտի դերակատարությունը Հայաստանում իրականացվող ինստիտուցիոնալ եւ ժողովրդավարական բարեփոխումների խթանման գործում:

Սթիվեն Նիքսը շնորհակալություն է հայտնել ընդունելության համար եւ նշել, որ ինստիտուտի ծրագրերի արդյունավետ իրագործման կարեւոր նախապայմաններից է պետական կառույցների հետ ձեւավորված կառուցողական եւ արդյունավետ համագործակցությունը: Նա վերահաստատել է կազմակերպության պատրաստակամությունը շարունակելու աջակցությունը Հայաստանում ժողովրդավարական գործընթացների ամրապնդման ուղղությամբ:

## ԻՍՊԱՆԻԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԵԼ Է

Իսպանիայի վարչապետ Պեդրո Սանչեսն արձագանքել է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի այն սպառնալիքներին, որ Վաշինգտոնը կխզի Մադրիդի հետ առեւտուրը՝ Իրանի ռմբակոծությանը Իսպանիայի դեմ լինելու պատճառով: Սանչեսը նշել է, որ Իրանի դեմ պատերազմը կարող է վտանգել միլիոնավոր մարդկանց կյանքը: Այս մասին հաղորդում է BBC-ն:

Մարտի 4-ի առավոտյան հեռուստատեսային ելույթում Սանչեսն ասել է, որ կառավարության դիրքորոշումը կարելի է ամփոփել «ո՛չ պատերազմին» խոսքերով:

Նա կոչ է արել չկրկնել «անցյալի սխալները»՝ նկատի ունենալով 2003 թվականին Իրաք ներխուժումը, որը, նրա խոսքով, չի հասել իր նպատակներին եւ ստեղծել է անապահովություն ու վտանգավորացրել է շատերի կյանքը:

Սանչեսի խոսքով՝ Իրանի վրա հարձակումները կարող են նմանատիպ տնտեսական ազդեցություն ունենալ միլիոնավոր սովորական մարդկանց վրա, եւ կառավարությունը քննարկում է դրան հակազդելու միջոցները:

Ավելի վաղ Թրամփը սպառնացել էր «խզել բոլոր կապերը» Իսպանիայի հետ եւ երկիրը որակել էր «սարսափելի», այն բանից հետո, երբ Սանչեսը հրաժարվել է թույլ տալ ԱՄՆ-ին օգտագործել իր ռազմական բազաները Իրանի դեմ հարվածների համար:

Մադրիդն այդ հարվածները որակել է որպես «անհիմն եւ վտանգավոր ռազմական միջամտություն»:

## ԲՈՂՈՔԻ ՆՈՏԱ

Էստոնիայի ԱԳՆ-ն Ռուսաստանի Դաշնության գործերի ժամանակավոր հավատարմատարին փոխանցել է բողոքի նոտա: Այդ մասին տեղեկանում ենք «ՌԻԱ Նովոստի»-ից:

«Էստոնիայի արտաքին գործերի նախարարությունը կանչել է Ռուսաստանի Դաշնության գործերի ժամանակավոր հավատարմատարին՝ նրան ներկայացնելու Էստոնիայի տարածքային ջրերում ռուսական սառցահատ նավի տեղաշարժի ընթացակարգային կանոնների վերաբերյալ համապատասխան նոտա», - ասված է Էստոնիայի արտաքին գործերի նախարարության հայտարարության մեջ:

Էստոնիայի արտաքին գործերի նախարարությունը պարզաբանել է, որ միջադեպը վերաբերում է «Մուրմանսկ» սառցահատի տեղաշարժին, որը փետրվարի 28-ին ուղեկցում էր Ֆինլանդիայի ծոց՝ Olympic Friendship լցանավը սառցակույտերից դուրս բերելու համար:

ՀԱՆՑԱՎՈՐ ԿԼԱՆ

# ԾԵԾԿՌՏՈՒՔ ԷՋՄԻԱԾՆԻ ԴՊՐՈՑՈՒՄ

**ArmLur.am-ը ահազանգ է ստացել, որ Վաղարշապատի «Մաքսիմ Գորկու» անվան N 5 ավագ դպրոցում լարված իրավիճակ է:**

Ըստ ահազանգի՝ կան հանցավոր ենթամշակույթ կրող խմբեր, որոնք պարբերաբար խնդիրներ են ունենում դպրոցում սովորող տարբեր երեխաների հետ: Նշված դեպքերի եւ այդ խմբերի գոյության մասին գիտի նաեւ դպրոցի ղեկավար կազմը, որը որեւէ միջոց չի ձեռնարկում: Արդյունքում, մարտի 3-ին դպրոցի բակում նշված «կլանի» մասնակից 10-րդ դասարանի աշակերտներ 5-7 հոգով հարձակվել եւ հարվածներ են հասցրել մեկ այլ աշակերտի, հարվածողների ձեռքում եղել են նաեւ երկաթյա ձողեր. տուժած աշակերտը ստացել է մարմնական վնասվածք:

Միջադեպի մասին ահազանգ է հնչել ոստիկանություն: ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ ոստիկանությունը բավականին արագ է գործել, ու հարցաքննել են շատ անձանց, այդ թվում դպրոցի սոցմանկավարժներից մի քանիսին: Զարմանալին այն է, որ սոցմանկավարժները չեն պատմել ողջ ճշմարտությունը՝ փորձելով քողարկել դեպքի իրական հանգամանքները, սակայն ոստիկանության օպերատիվ աշխատանքի շնորհիվ դեպքի ողջ հանգամանքները բացահայտվել են, ձեռնարկվել են գործուն միջոցներ:




ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ երկաթյա ձողերով միջադեպի գործը արդեն ՀՀ քննչական կոմիտեում է: ArmLur.am-ը դիմեց ՀՀ քննչական կոմիտե, որտեղից խոստացան պատասխանել մի փոքր ուշ:

Ի դեպ, այս դպրոցում 2023 թվականին 15-ամյա աշակերտը համադասարանցիների հետ միջադեպից հետո՝ մի քանի օր անց, մահացել էր: Մահացած անչափահասի հարազատները հայտարարել են՝ երեխայի մահվան պատճառը եղել է դպրոցում աշակերտների ծեծկռտուքը:

«Էջմիածնի բժիշկ Կոնդյանի թոռը ծեծել է իմ բալին, դպրոցի փոխտնօրենի տղեն ծեծել է իմ բալին, կամերաները ֆիքսել են: Ծեծել են: Նարեկս ասաց՝ երեք հոգով են ծեծել, հիմա երկուսի անունը գիտենք»,-պատմել էր մահացած Նարեկի հորաքույրը:

Մինչդեռ դպրոցի էջմիածնի թիվ 5 դպրոցի տնօրեն Գայանե Սաֆարյանը նշել էր, որ աշակերտին որեւէ մեկը ծեծի չի ենթարկել, աշակերտների միջեւ տեղի է ունեցել քաշքշուկ, ինչից հետո երեխան մասնակցել է դասապրոցեսին, եւ միայն օրեր անց ինքնազգացողությունը վատացել է, եւ տեղափոխվել է «Սուրբ Աստվածամայր» ԲԿ, որտեղ մահացել է:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

# ԵՌՄԱՆ ՋՈՒՐԸ՝ ԽՈՀԱՐԱՐԻ ԴԵՄՔԻՆ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Հ.Պ-ին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2025 թվականի հոկտեմբերի 30-ին՝ ժամը 08:00-ի սահմաններում, Երեւան քաղաքի Ամիրյան 1 հասցեում գործող «Արմենիա Մարիոթ» հյուրանոցի խոհանոցում, անհիմն, առանց որեւէ պատճառի վեճի է բռնվել խոհարար Սամսոն Սողոմոնյանի հետ, որի ընթացքում նրա առողջությանը վնաս պատճառելու դիտավորությամբ, խուլիգանական դրդումներով, ելնելով հանրորեն ընդունված նորմերին հակադրվելու ներքին զգացումից, կաթսայով լի եռման ջուրը լցրել է վերջինի դեմքին, այնուհետեւ իր մոտ գտնվող դանակով հարվածներ է հասցրել Սամսոն Սողոմոնյանին, նրա առողջությանը պատճառելով միջին ծանրության վնաս, որն առաջացրել է առողջության տեւական քայքայում:

Շարունակելով իր խուլիգանական վարքագիծը՝ Հ.Պ.-ն, դանակը ձեռքին, դուրս է եկել խոհանոցից եւ խուլիգանություն կատարելու ուղղակի դիտավորությամբ՝ սեփական անձի կարծեցյալ առավելությունն ընդգծելու մղումով, համակեցության կանոնների ցուցադրաբար անտեսմամբ, կոպիտ կերպով խախտել է հասարակական կարգը՝ հասարակության նկատմամբ անհարգալից, իրավական ու բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելով:

Մասնավորապես, ինքնահաստատման եւ հասարակության հանդեպ երեւակայական գերազանցությունն արտահայտելու հանդուգն ձգտումով տեւական ժամանակ հյուրանոցում դրսեւորել է հակաբարոյական եւ հակաիրավական վարքագիծ, աղմկել է հյուրանոցում գտնվող անձանց ներկայությամբ, խուլիգանական դրդումներով, ֆիզիկական ներգործություն գործադրելու դիտավորությամբ հարվածներ է հասցրել Լիլիթ Կարապետյանի եւ Քրիստինա Կարապետյանի մարմնի տարբեր հատվածներին՝ անհանգստություն պատճառելով շրջակայքում գտնվող անձանց եւ խաթարելով նրանց անդորրը:




# ՊՂՆՁԻ ԽԱՐԱՄ

Փետրվարի 27-ին Համայնքային ոստիկանության Թումանյանի բաժնում հաղորդում տված Ալավերդիի համայնքապետարանի աշխատակիցը հայտնել էր, որ չնայած դատարանի արգելքին՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններից մեկը փետրվարի 19-ից փետրվարի 26-ն ընկած ժամանակահատվածում Ալավերդի քաղաքի Կոշաբերդի փողոցից ապօրինի տեղափոխել է մոտ 943,8 տոննա պղնձի խարամ՝ կոշտ թափոն, ինչի հետեւանքով համայնքին պատճառվել է մոտ 14 միլիոն 157 հազար դրամի վնաս:

Համայնքային ոստիկանների ձեռնարկած միջոցառումների արդյունքում նույն օրը՝ կեսգիշերն անց, Արարատի մարզի Դաշտաքար գյուղի բնակչի վարած «Իվեկո» մակնիշի կցորդիչով բեռնատարը՝ պղնձի խարամով հանդերձ, հայտնաբերվել եւ տեղափոխվել է Թումանյանի բաժնի պահպանվող հատուկ տարածք:

Կազմված փաստաթղթերն ուղարկվել են նախաքննական մարմին:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

# ՀԵՏԱԽՈՒԶՎՈՂԸ

Համայնքային ոստիկանության Արթիկի բաժնի ծառայողները ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում մարտի 2-ին Արթիկ քաղաքի Գորկու փողոցի հասցեներից մեկում հայտնաբերել, ձերբակալել եւ բաժին են տեղափոխել Գյումրի քաղաքի բնակիչ 44-ամյա մի տղամարդու: Նա 2025թ. դեկտեմբերի 19-ից ՌԴ Կրասնոդարի երկրամասի իրավապահների կողմից հետախուզվում էր կողոպուտի մեղադրանքով. խափանման միջոցը՝ կալանք:

Հայտնաբերման մասին հայտնվել է հետախուզումը նախաձեռնողին:

# ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնում նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում ՀՀ ՆԳՆ քրեական ոստիկանության գլխավոր վարչության ծառայողների հետ համատեղ իրականացված մեծածավալ քննչական եւ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ «Զինվորի կողքին» ռազմահայրենասիրական հասարակական կազմակերպության փոխնախագահ Ա.Թ.-ն, ՀՀ պաշտպանության նախարարության զորամասերից մեկի վարորդ-տեխնիկ Տ.Ղ.-ի հետ նախնական համաձայնությամբ, զինվորական հաշմանդամություն ունեցող մի շարք անձանց «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի անվան շահարկմամբ խաբեությամբ հայտնել են, իբր կարող են 39-42 մլն ՀՀ դրամի օգնություն ստանալ, որի դիմաց պահանջել են հիշյալ գումարի 10 տոկոսի չափով կանխավճար: Այնուհետեւ Ա.Թ.-ն եւ Տ.Ղ.-ն 2020 թվականի 44-օրյա պատերազմում ձեռքը կորցրած Մ.Հ.-ից հիշյալ պատրվակով պահանջել եւ 2025 թվականի դեկտեմբերի 20-ին ստացել են առանձնապես խոշոր չափերով՝ 3 մլն 800 հզր ՀՀ դրամ, որը խարդախությամբ հափշտակել են:

Բացի այդ, հանցավոր խմբի անդամները համանման եղանակով փորձել են գումար հափշտակել նաեւ 44-օրյա պատերազմի ընթացքում վիրավորում ստացած Ռ.Գ.-ից եւ Ա.Ա.-ից, սակայն դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությունն իրենց կամքից անկախ հանգամանքներում չեն կարողացել իրագործել, քանի որ վերջիններս հրաժարվել են գումար փոխանցել նրանց: Նախաքննության ընթացքում կատարվել են բազմաթիվ քննչական եւ վարույթային գործողություններ, այդ թվում՝ միաժամանակյա խուզարկություններ շուրջ մեկ տասնյակ հասցեներում:

Ա.Թ.-ի եւ Տ.Ղ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 44-255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (առանձնապես խոշոր չափերով խարդախության փորձ): Նրանցից մեկի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը, մյուսի նկատմամբ՝ տնային կալանքը:

Դեպքի բոլոր հանգամանքները, տուժողների ամբողջական շրջանակը, ինչպես նաեւ Ա.Թ.-ի եւ Տ.Ղ.-ի հետ հանցավոր համաձայնություն ձեռք բերած մյուս անձանց ինքնությունները պարզելու ուղղությամբ նախաքննությունը շարունակվում է:

● *Հանրապետությունում մարտի 2-ից 3-ը բացահայտվել է 158 հանցագործություն, որոնցից 9-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

## 7 ԾՐԱԳԻՐ

«Մասնակցային բյուջետավորում 2026թ.» ծրագիրը Տավուշի մարզի համայնքներում մեծ աղմուկ առաջացրեց: Համայնքապետարանները գովազդում էին, որ մասնակցային բյուջետավորման գործընթացը քաղաքացիներին հնարավորություն է տալիս անմիջականորեն մասնակցել համայնքային բյուջեի մի մասի բաշխմանը եւ իրենց համայնքի զարգացմանը վերաբերող որոշումների կայացմանը՝ ձեւավորելով ավելի պատասխանատու եւ ներառական տեղական ինքնակառավարում: Համայնքների բնակավայրերից ներկայացված ծրագրերի հեղինակները իրենց բարեկամներին, ծանոթներին, նաեւ անծանոթներին խնդրում էին համայնքապետարանի ինտերնետային կայքում քվեարկել իրենց ներկայացրած ծրագրի օգտին, որպեսզի այն շատ քվեներ ստանա, հաղթող ճանաչվի ու իրականացվի: Ստացվեց «Եվրատեսիլ»-ի կամ երգի մրցույթների քվեարկության նման: Սակայն ի սկզբանե պարզ էր, որ առավել մեծ բնակչություն ունեցող բնակավայրերից ներկայացված ծրագրերն ավելի մեծ հնարավորություններ ունեն քվերակությամբ հաղթող ճանաչվելու: Այդպես էլ եղավ, հաղթեցին Իջեւան եւ Բերդ քաղաքներից եւ մարզի մեծ գյուղերից ներկայացված ծրագրերը: Դա պարզ դարձավ «Մասնակցային բյուջետավորում 2026թ.» ծրագրի շրջանակում քաղաքացիների կողմից ներկայացված հայտ-առաջարկների քվեարկության արդյունքների ամփոփումից հետո: Իջեւան համայնքում մասնակցային կառավարման մակարդակի բարձրացման եւ որոշումների կայացման գործընթացում բնակչության ազդեցության ընդլայնման նպատակով ծրագրի իրականացման համար նախատեսվել էր 65 միլիոն 537 հազար 900 դրամ:

Ներկայացված 17 հայտ-առաջարկներից քվեարկության արդյունքներով հաղթող են ճանաչվել հետեւյալ 3 ծրագրերը՝ «Իջեւան քաղաքի Մետաղագործների թաղամասի կոյուղու կառուցում», «Ազատամուտ բնակավայրի մշակույթի տան մեծ դահլիճի վերածնունդ» եւ «Աչաջուր բնակավայրի մարզադաշտի վերանորոգում» նախագծերը: «Մասնակցային բյուջետավորում 2026» գործընթացի շրջանակում Նոյեմբերյան համայնքի ավագանին ծրագրային առաջարկների իրականացման համար սահմանել էր 20 միլիոն դրամ, իսկ պետբյուջեով հատկացված սուբվենցիայի չափը կազմում է 38 միլիոն 570 հազար դրամ: Քվեարկության արդյունքներով հաղթող են ճանաչվել «Կողբ բնակավայրում 11 կմ երկարությամբ փողոցային լուսավորության ցանցի կառուցում» եւ «Բերդավան բնակավայրում ֆուտբոլի դաշտի հիմնանորոգում» նախագծերը: «Մասնակցային բյուջետավորում 2026» գործընթացի շրջանակում Բերդ համայնքում ներկայացվել է 13 ծրագիր, հաղթող է ճանաչվել «Բերդի քաղաքային հրապարակի կառուցում» հայտ-առաջարկը, որի բյուջեն կազմում է 48 միլիոն դրամ, որից պետբյուջեի ներդրումը 38 միլիոն դրամ, Բերդի համայնքի ներդրումը՝ 10 միլիոն դրամ: Իսկ Դիլիջան համայնքում ներկայացված 3 հայտ-առաջարկներից հաղթող է ճանաչվել «Փոքրիկ հուշաղբյուր Հովք գյուղի դպրոցի մոտ, գյուղի կենտրոնական մասում» ծրագիրը:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*

ԱՄՆ-ԻՐԱՆ

# ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

**Իրանի ապագայի վերաբերյալ ռազմավարական գնահատականները հաճախ ուղեկցվում են սխալ հաշվարկներով: Պատմությունը ցույց է տալիս, որ քաղաքական ռեժիմների կայունության կամ փլուզման վերաբերյալ կանխատեսումները հաճախ չեն իրականանում: Այդ պատճառով Իրանի շուրջ զարգացումները պետք է գնահատել զգուշությամբ՝ հաշվի առնելով, որ հակամարտությունների ընթացքը հազվադեպ է լինում գծային եւ կանխատեսելի:**



Տասնամյակներ շարունակ Իրանը արեւմտյան ռազմավարական մտածողության մեջ դիտվել է որպես հիմնականում մերձավորարեւելյան խնդիր: Սակայն նրա հյուսիսային սահմանը, որը սահմանակից է Հայաստանին եւ Ադրբեջանին, վաղուց կարեւոր դեր է խաղում Հարավային Կովկասում:

Իրանում լուրջ քաղաքական վերափոխումը կարող է վերակազմավորել ուժերի հարաբերակցությունը արդեն իսկ փխրուն աշխարհաքաղաքականություն ունեցող տարածաշրջանում՝ ազդելով նաեւ Ռուսաստանի՝ Ուկրաինայում մղվող պատերազմի վրա: Հարավային Կովկասը ներկայում անցնում է դանդաղ, բայց խորքային վերադասավորումների փուլ: Ռուսաստանի ազդեցությունը թուլացել է, Թուրքիան ընդլայնել է իր ներկայությունը, իսկ Իրանը հանդես է եկել որպես ստատուս-քվոյի պաշտպան եւ սահմանների փոփոխության ընդդիմախոս: Իրանի ապագան որոշիչ կլինի՝ կմնա՞ նա կայունացնող բուֆեր, կդառնա՞ ինտեգրման կամուրջ, թե՞ կվերածվի անկայունության աղբյուրի: Այս հարցերի պատասխաններն էլ կվճռեն Հարավային Կովկասի հետագա ճակատագիրը:

### *Հայաստան, Ադրբեջան, Վրաստան. տարբեր ազդեցություններ*

Տարածաշրջանում Հայաստանը ամենազգայունն է Իրանում տեղի ունեցող քաղաքական փոփոխությունների նկատմամբ, քանի որ Իրանը ՀՀ-ի համար հանդիսանում է ոչ թշնամական հարավային սահման եւ տնտեսական այլընտրանքային ուղի: Իրանի կայուն ու վերաինտեգրված տարբերակը Հայաստանի համար ամենաբարենպաստն է, իսկ քաղաքական եւ անվտանգային անկայունությունը՝ ամենավտանգավորը:

Ադրբեջանի պարագայում հարցը ավելի երկիմաստ է: Աշխարհաքաղաքական տեսանկյունից, իհարկե, Ադրբեջանի համար շահեկան է Իրանի թուլացումը, հաշվի առնելով Ադրբեջան - Իսրայել բարեկամական հարաբերությունները եւ ՀՀ կարեւոր ռազմավարական գործընկեր լինելու հանգամանքը, սակայն Իրանի փլուզումը պարունակում է լուրջ ռիսկեր՝ հատկապես Իրանում բնակվող միլիոնավոր ադրբեջանցիների հարցում:

Ինչ վերաբերվում է Վրաստանին, ապա Վրաստանը չունի ուղղակի սահման Իրանի հետ, սակայն նրա դերը՝ որպես արեւելք-արեւմուտք տարանցիկ միջանցք, կախված է տարածաշրջանային կայունությունից: Իրանի ապագան կարող է կա՛մ ամրապնդել Վրաստանի դերը, կա՛մ խորացնել նրա աշխարհաքաղաքական տատանումները:

ԱՄՆ-Իրան հակամարտության զարգացման տրամաբանությունը ցույց է տալիս, որ Իրանի ներսում հնարավոր փոփոխությունները տարբեր աստիճանի ազդեցություն կունենան Հարավային Կովկասի անվտանգության համակարգի վրա: Տարածաշրջանի կայունությունը զգալիորեն կախված է նրանից, թե ինչ ուղղությամբ կընթանան Իրանի ներքաղաքական եւ արտաքին քաղաքական վերափոխումները:

Առաջին՝ Իրանի կարգավորված եւ պրագմատիկ անցումը համարվում է Հարավային Կովկասի համար առավել կայունացնող սցենարներից մեկը: Եթե Թեհրանում ձեւավորվի ավելի հաշվարկված եւ միջազգային համակարգում ինտեգրվող իշխանություն, ապա դա կնպաստի լարվածության նվազեցմանը, տնտեսական կապերի վերականգնմանը եւ տարածաշրջանում ուժային հավասարակշռության ավելի կանխատեսելի ձեւավորմանը: Այդ պարագայում կբարձրանա էներգետիկ եւ տարանցիկ նախագծերի բազմազանությունը, կթուլանա բլոկային բեւեռացումը, իսկ փոքր պետությունները կստանան ավելի լայն մանեւրելու հնարավորություն: Այս տարբերակը, իհարկե, արեւմտյան կողմի կանխատեսումներին է ավելի համապատասխան:

Երկրորդ՝ Իրանի պետական համակարգի փլուզումը կամ երկարատեւ քաոսային անկայունությունը կլինի ամենաապակայունացնող զարգացումը ոչ միայն Իրանի, այլ նաեւ ողջ տարածաշրջանի համար: Նման սցենարը կհանգեցնի փախստականների հնարավոր հոսքերի, սահմանային անվտանգության ռիսկերի աճի, տնտեսական կապերի խաթարման եւ արտաքին ուժերի մրցակցության սրման: Հարավային Կովկասը, լինելով անմիջական հարեւան տարածաշրջան, առաջիններից մեկը կզգա այդ ազդեցությունը՝ թե՛ հումանիտար, թե՛ անվտանգային եւ թե՛ աշխարհաքաղաքական մակարդակներում: Այդ պայմաններում տարածաշրջանը կարող է վերածվել մեծ տերությունների մրցակցության նոր հարթակի:

Երրորդ՝ կոշտ ազգային-ավտորիտար կառավարման ռեժիմի շարունակականությունը, նույնիսկ իշխանության փոփոխության պարագայում, կապահովի հարաբերական կանխատեսելիություն, սակայն չի վերացնի բլոկային դիմակայությունը: Իրանը կշարունակի հանդես գալ որպես հակակշիռ արեւմտյան ազդեցությանը, կպահպանի համագործակցությունը ոչ արեւմտյան դերակատարների հետ եւ կշարունակի դիմակայել տարածաշրջանային այն նախագծերին, որոնք ընկալվում են որպես իր շահերին հակասող կամ սահմանափակող գործողություններ: Այս սցենարը չի ստեղծի կտրուկ ցնցումներ, սակայն կպահպանի լարված, բեւեռացված միջավայր:

Ի վերջո, պետք է հասկանալ, որ Իրանի հարցը չի կարելի դիտարկել միայն Պարսից ծոցի անվտանգության կամ միջուկային բանակցությունների շրջանակում: Թեհրանում ցանկացած էսկալացիա, ներքաղաքական վերադասավորում կամ ռազմավարական շրջադարձ անմիջապես կանդրադառնա Եվրասիական տարանցիկ միջանցքների, էներգետիկ շուկաների վերաձեւավորման, տնտեսությունների եւ ռուս-ուկրաինական պատերազմի վրա: Հարավային Կովկասը գտնվում է այս բոլոր աշխարհաքաղաքական ճեղքագծերի հատման կետում, եւ այդ պատճառով Իրանի շուրջ զարգացումները պետք է գնահատվեն ոչ միայն տարածաշրջանային, այլեւ համաեվրասիական անվտանգության համակարգի համատեքստում:

*ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ*

## «ՌԵՆՇԻՆ»-Ը ԱՋԱԿՑՈՒՄ Է

Գ.

Կայուն զարգացումն ու պետության ապագան սկսվում են հասարակությունից, իսկ հասարակության ամենաամուր հիմքը կրթված եւ իր տաղանդը դրսեւորելու հնարավորություն ունեցող սերունդն է: Այս փիլիսոփայությունն է ընկած «Ռենշին» ներդրումային-քաղաքաշինական ընկերության սոցիալական պատասխանատվության ռազմավարության հիմքում, որի շրջանակում ընկերությունը հայտարարել է լայնամասշտաբ մշակութային եւ կրթական աջակցության մասին:

Դեռեւս 2025 թվականի հոկտեմբերին Երեւանում ստորագրված պաշտոնական հուշագրով նոր զարկ տրվեց «Ռենշին»-ի եւ «Music for Future» (Երաժշտություն հանուն ապագայի) հիմնադրամի երկարաժամկետ գործընկերությանը: Այս ռազմավարական համագործակցության շրջանակում «Ռենշին»-ը 100 միլիոն ՀՀ դրամի ներդրում է իրականացնում հիմնադրամի «Վիրտուոզների բանաձեւը» նախագծի զարգացման մեջ՝ ամուր հարթակ ստեղծելով երիտասարդ տաղանդների բացահայտման եւ զարգացման համար:

### *Ավելին, քան պարզապես ֆինանսավորում*

«Ռենշին»-ի աջակցությունն այս նախագծին զուտ ֆինանսական բնույթ չի կրում: Այն խորապես գիտակցված եւ նպատակային ներդրում է Հայաստանի մշակութային միջավայրի զարգացման, երիտասարդների կրթության եւ նրանց մասնագիտական կայացման գործում:

Երաժշտության աշխարհում կրթվող եւ ձեւավորվող երեխաներն օժտված են բացառիկ, յուրահատուկ մտահորիզոնով: Նրանք արվեստն ու իրականությունը ընկալում են շատ ավելի նուրբ ու խորը շերտերում, եւ այդ ներուժը ճիշտ ուղղորդելու դեպքում ունակ են փոխելու ոչ միայն իրենց, այլեւ ողջ հասարակության մշակութային պատկերը: Հենց այս համոզմունքն է մղել ընկերությանը հանդես գալ՝ որպես ապագա հայ երաժիշտների պատրաստման գործընթացի անմիջական աջակից:

### *Միջազգային ճանաչում եւ նոր հնարավորություններ*

«Վիրտուոզների բանաձեւը» նախագիծը, այս համագործակցության շնորհիվ, ընդլայնում է իր սահմանները: Տրամադրված ռեսուրսներն ու փորձի փոխանակումը հնարավորություն են տալիս կյանքի կոչել նոր կրթական ծրագրեր, կազմակերպել բարձրակարգ համերգներ եւ հաստատել միջազգային նոր կապեր:

Գլխավոր նպատակներից մեկը հայ երիտասարդ արտիստների եւ պատանի վիրտուոզների միջազգային ճանաչելիության բարձրացումն է: «Ռենշին»-ի աջակցության շնորհիվ ստեղծվում են իրական հնարավորություններ, որպեսզի տաղանդավոր պատանիները կարողանան իրենց խոսքն ասել ոչ միայն հայաստանյան, այլեւ համաշխարհային բեմերում՝ ներկայացնելով հայկական կատարողական արվեստի նոր որակը:

«Ռենշին»-ի եւ «Music for Future» հիմնադրամի գործընկերությունը եւս մեկ անգամ ապացուցում է, որ բիզնեսի եւ արվեստի երկարաժամկետ, արժեքահեն համագործակցությունը լավագույն «բանաձեւն» է՝ կայուն հիմքեր ստեղծելու այն սերնդի համար, որը վաղը ձեւավորելու է մեր երկրի մշակութային դեմքը:

● *Ըստ ՃՏՊ վիճակագրության՝ անցած 1 օրում գրանցվել է 9 ավտովթար. 1 մարդ զոհվել է, 21-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

IDBANK

## ՊՐԵՄԻՈՒՄ ՔԱՐՏԵՐ



IDBank-ը ձեր ճամփորդական մի շարք պահերն ավելի հարմարավետ դարձնելու համար ընդլայնել է իր Պրեմիում քարտերի ճամփորդական առավելությունները: Մեկ քարտ ու այսքա՜ն հնարավորություններ:

Այսպիսով, մինչեւ 2026թ. հոկտեմբերի 31-ը Պրեմիում քարտերի համար կգործեն հետեւյալ պայմանները՝

Բիզնես սրահ մուտքեր՝ ամեն անգամ 1 հյուրի հնարավորությամբ `

• Travel Card - 6 այց
• Visa Signature - 10 այց
• Visa Infinite - 20 այց

Կարեւոր է նշել, որ մուտքերը հասանելի են առանց որեւէ նախապայմանի:

Օգտվելու համար անհրաժեշտ է ներբեռնել եւ ակտիվացնել Visa Airport Companion հավելվածը:

Fast Track ծառայություն՝ ամեն անգամ 1 հյուրի հնարավորությամբ `

• Travel Card - 6 տեղական + 6 Միջազգային օդանավակայաններ
• Visa Signature - 10 տեղական + 10 Միջազգային օդանավակայաններ
• Visa Infinite - 20 տեղական + 20 Միջազգային օդանավակայաններ

Ուղեբեռի փաթեթավորման ծառայություն՝ ամեն անգամ 1 հյուրի հնարավորությամբ `

• Travel Card - 6 կտոր ուղեբեռ
• Visa Signature - 10 կտոր ուղեբեռ
• Visa Infinite - 20 կտոր ուղեբեռ

Ռոումինգ ծառայություն՝

• Travel Card - 3 ԳԲ
• Visa Signature - 6 ԳԲ
• Visa Infinite - 9 ԳԲ

Visa Infinite Special Edition քարտապաններն էլ բացառիկ հնարավորություններ ունեն՝

• անսահմանափակ մուտք օդանավակայանների բիզնես սրահներ, ներառյալ անսահմանափակ հյուրերի մուտք՝ ամեն անգամ մինչեւ 2 հյուրի հնարավորությամբ
• Fast Track՝ անսահմանափակ քարտապանի համար եւ 6 այց հյուրերի համար, յուրաքանչյուր այցին 1 հյուրի հնարավորությամբ
• օդանավակայանից հյուրանոց տրանսֆեր Դուբայում եւ Աբու Դաբիում 4 անգամ
• Bolt Taxi-ի հետ համատեղ առաջարկ՝ 50% զեղչ դեպի օդանավակայան եւ օդանավակայանից ուղղությունների համար (առավելագույնը 50 EUR 1 ուղղության համար նշված երկրներում)
• Տարեկան 2 անգամ Meet&Greet նշված երկրներում
• Ուղեբեռի փաթեթավորում՝ անսահմանափակ (օրական առավելագույնը 3 կտոր ուղեբեռ):

Եւ վերջում, եւս մեկ հիանալի առաջարկ, եթե դեռ չունեք IDBank-ի Travel Card-ը. մինչեւ 2026թ. ապրիլի 30-ը Idram&IDBank հավելվածով պատվիրեք Travel Card-ը եւ ձեռք բերեք քարտը 40% զեղչով՝ առաջին տարվա համար վճարելով 12.000 դրամ: (Գ)

*Ընկերությունները վերահսկվում են ՀՀ ԿԲ կողմից*


ԱԿԲԱ-Ի ՆՎԵՐԸ Գ.

# ԿՈՄԻՏԱՍԻ ՊՈՒՐԱԿԸ ԿԲԱՐԵԿԱՐԳՎԻ

**Ակբա բանկի եւ Երեւանի քաղաքապետարանի համագործակցությամբ Կոմիտասի անվան պուրակը կբարեկարգվի: Պուրակի բարեկարգումն Ակբա բանկի նվերն է Երեւանին՝ իր 30-ամյակի կապակցությամբ:**



Նախագծի նպատակն է այգին դարձնել հանգստի ու զբոսանքի լիարժեք վայր: Առաջիկայում պուրակը կդառնա ավելի բարեկարգ, ժամանակակից ու կանաչապատ. կոնսերվատորիայի հարակից այգին կխոսի ու կպատմի վարդապետի ու նրա թողած ժառանգության մասին:

Տարածքում տնկվելու է ավելի քան 3000 բույս, որոնք կստեղծեն հարմարավետ եւ կանաչ միջավայր: Կտեղադրվի կաթիլային ոռոգման համակարգ, կավելանան նոր զբոսուղիներ, կկառուցվի նաեւ փոքր բեմ՝ ամֆիթատրոնով, որտեղ հնարավոր կլինի կազմակերպել բացօթյա համերգներ:

Այգին վերաիմաստավորվելու է նոր բովանդակությամբ, միեւնույն ժամանակ առաջնային նպատակներից է պահպանել այգու արդեն ձեւավորված, բարձրահասակ ու հասուն ծառերը: Նույնքան կարեւոր է պահպանել պուրակի պատմական կառուցվածքը: Հուշարձանի շուրջ նախատեսվում է ջրային տարր ավելացնել՝որպես հարգանքի տուրք այն հայտնի պատկերին, որտեղ Կոմիտասը նստած է լճակի դիմաց:

«Ակբա բանկը նշում է 30-ամյակը. մի շարք միջոցառումներ են նախատեսվում, եւ սա Երեւանի հետ կապված մեր ամենամեծ միջոցառումներից մեկն է եւ մեր մեծ նվերն է լինելու քաղաքին: Ուզում ենք, որ այս կանաչ անկյունը ավելի գրավիչ, ավելի ժամանակակից եւ ավելի սիրված վայր դառնա երեւանցիների ու հատկապես երեխաների, ուսանողների համար: Նախագիծը իրականացվելու է ժամանակակից բոլոր ստանդարտներին համապատասխան, հաշվի են առնվելու էկոլոգիական բոլոր պայմանները, կանաչ հատվածի պահպանումը, նաեւ նոր գեղարվեստական լուսավորման միջոցներ են լինելու»,- նշել է Ակբա բանկի գլխավոր գործադիր տնօրեն Հակոբ Անդրեասյանը:

«Այս նախագիծը մենք իրականացնում ենք Ակբա բանկի գործընկերների հետ, եւ սա, կարելի է ասել, մատների վրա հաշված, բայց շատ կարեւոր նախաձեռնություններից մեկն է, որ եկել է մեր բանկային ոլորտից: Ակբա բանկը առաջարկեց իրականացնել նախագիծ այս այգում եւ նաեւ համաֆինանսավորել այգու վերակառուցումը: Ըստ այդ նախագծի, կարծում եմ, սա քաղաքի սրտում ամենակարեւոր կանաչ տարածքներից մեկն է, ամենակարեւոր այգիներից մեկն է, որը վերադառնալու է քաղաքին արդեն նոր տեսքով, արդիականացված տեսքով: Ուզում եմ շնորհակալությունս հայտնել պարոն Անդրեասյանին ակտիվ մասնակցության համար եւ կարծում եմ՝ սա շատ կարեւոր օրինակ է մասնավոր մեր գործընկերների համար, որ իրականում անկախ ոլորտից նաեւ շատ կարեւոր է սոցիալական պատասխանատվությունը: Կարծում եմ՝ Ակբա բանկը սոցիալական պատասխանատվության առումով շատ մեծ դերակատարում փիքսեց քաղաքի նկատմամբ: Ե՛ւ ես, ե՛ւ երեւանցիները շատ շնորհակալ ենք ձեզ այդ մոտեցման համար»,- նշել է Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

*Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից*

## ԱՆՎՃԱՐ ԻՆՏԵՐՆԵՏ ՌՈՈՒՄԻՆԳՈՒՄ Գ.

Հաշվի առնելով Մերձավոր Արեւելքում ստեղծված իրավիճակը եւ մեր բաժանորդների անվտանգությունն ու մշտական հաղորդակցություն ապահովելու անհրաժեշտությունը՝ Team Telecom Armenia-ն ստորեւ ներկայացված երկրներում գտնվող իր բաժանորդներին կտրամադրի հավելյալ 1 GB անվճար ինտերնետ փաթեթ ռոումինգում:

• Արաբական Միացյալ Էմիրություններ
• Իսրայել
• Կատար
• Սաուդիան Արաբիա
• Քուվեյթ
• Օման
• Իրաք
• Հորդանան
• Բահրեյն

Team-ը պատրաստ է անհրաժեշտության դեպքում իրականացնելու աջակցության նոր քայլեր՝ ապահովելով մեր բաժանորդների անխափան կապը:




***Team Telecom Armenia-ի մասին***

Տելեկոմ-Արմենիա ԲԲԸ-ն (ապրանքանիշը՝ Team Telecom Armenia) հայկական ընկերություն է, որը առաջատար դիրք է զբաղեցնում երկրի հեռահաղորդակցության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում: Հանդիսանալով Հայաստանում առաջին տելեկոմ ցանցի ժառանգորդը՝ ընկերությունը ունի ոլորտում ծառայությունների մատուցման ավելի քան 100 տարվա պատմություն: Team-ը տրամադրում է բջջային եւ ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ թե՛ անհատ, թե՛ կորպորատիվ բաժանորդներին: Հայաստանի բոլոր բնակիչներին բարձրորակ հեռահաղորդակցության ծառայությունների մատուցումը Team Telecom Armenia-ի նպատակն է: Դրան հասնելու համար ընկերությունն անընդհատ արդիականացնում ու վերազինում է բջջային եւ ֆիքսված ցանցերը, գործարկում նոր միջազգային կապուղիներ, որոնք նաեւ բարձրացնում են Հայաստանում ինտերնետի հուսալիության եւ անվտանգության մակարդակը:

*●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ՊԱՀՔԻ ՍԵՂԱՆ

# ԻՆՉ ՊԱՏՐԱՍՏԵԼ ԱՅՍ ՕՐԵՐԻՆ

**Այսօր Մեծ պահքի տասնութերորդ օրն է: Այն տեւում է 48 օր՝ Բուն Բարեկենդանից մինչեւ Սուրբ Հարության տոն (Զատիկ): Պահքի շրջանում օգտագործում են բացառապես բուսական ծագում ունեցող սննդամթերք: Ուստի ArmLur.am-ը ներկայացնում է բուսական կերակրատեսակներ, որոնք կարելի է ուտել պահքի ժամանակ:**

### Բուսական աղցան Տաանյակ

Աղցանը պատրաստելու համար անհրաժեշտ է 10 հատ սմբուկ, 10 հատ լոլիկ, 10 հատ բուլղարական պղպեղ, 10 հ սոխ, 10 հ սեւ պղպեղ (ոլոռ), արեւածաղկի ձեթ 1 բաժակ, շաքարավազ 100 գրամ, աղ 2 ճ/գ, քացախ 3 ճ/գ, ախտոր 10 պճեղ:

Բանջարեղենը լավ լվանալ, սմբուկը կտրատել խորանարդիկներով, լցնել սառը ջրի մեջ, թողնել կես ժամ:

Լոլիկը բաժանել 4 մասի, սոխը՝ կես օղակներով, իսկ բուլղարական պղպեղն ու սխտորը՝ խոշոր խորանարդներով: Լցնել կաթսայի մեջ, դնել մարմանդ կրակին եւ եփելու ընթացքում 2-3 անգամ խառնել: Եփել 30-40 րոպե: Եփելու ընթացքում լցնել սեւ պղպեղը, ավելացնել սխտորն ու քացախը, խառնել եւ եփել եւս 5 րոպե: Անջատել եւ մատուցել սառը կամ տաք վիճակում: Մատուցելու ժամանակ կարող եք ավելացնել կանաչիների տեսակներ:

### Մախոխ ապուր

Մախոխ ապուրը արեւմտահայկական (Կարին, Սասուն) ավանդական թթվաշ ապուր է, որն ավանդաբար պատրաստվում է պահքի առաջին օրերին: Այն սովորաբար պարունակում է բլղուր, սոխառած, լոլիկ կամ տոմատի մածուկ, հոնի չիր կամ թթու դրած կանաչի, եւ պահքից հետո՝ երբեմն նաեւ մսով կոլոլակներ:



Ապուրը պատրաստվում է բոլոր բաղադրիչները միասին եփելով մինչեւ թանձրանալը: Կարինի եւ Սասունի հայերը պահքի առաջին օրը պարել են «Մախոխապուրի պարը»՝ առանց երաժշտության:

Մի՛շտ հիշեք՝ պահքի ընթացքում հրաժարվում են ոչ միայն որոշակի կերակուրներից, այլեւ մոլի սովորություններից, շատախոսությունից, ստախոսությունից, հայհոյանքից եւ այլ մեղքերից: Կերակրից հրաժարվելն առանց մեղքից հետ կանգնելու՝ անիմաստ ու անօգուտ է, որովհետեւ «սատանան միշտ պահքի մեջ է, ոչինչ չի ուտում, բայց մեղք գործելուց չի դադարում եւ չի հոգնում» (Սուրբ Գրիգոր Տաթեւացի):

Պահք պահում ենք մենք մեզ համար, մեր մեղքերից, վատ սովորություններից ազատվելու համար, այլ ոչ ցուցադրության համար: Մատթեոս 6:16-18-ում գրված է. «Երբ ծոմ պահեք, տրտմերես մի լինեք կեղծավորների նման, որոնք իրենց երեսներն այլանդակում են, որպեսզի մարդկանց այնպես երեւան, թե ծոմ են պահում, ճշմարիտ եմ ասում ձեզ, այդ իսկ է նրանց վարձը, այսինքն՝ մարդկանց երեւալը եւ նրանցից գովվելը: Այլ երբ դու ծոմ պահես, օծի քո գլուխը եւ լվա քո երեսը, որպեսզի չերեւաս մարդկանց ծոմ պահող, այլ քո Հորը, գաղտնաբար, եւ քո հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կհատուցի քեզ»:

*ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ*

ՄԱՐԶԱԿԱՆ

## ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԻԿ

Եվրոպայի չեմպիոն, Ունիվերսիադայի չեմպիոն, երիտասարդների աշխարհի կրկնակի չեմպիոն 18-ամյա մարմնամարզիկ Համլետ Մանուկյանը ճանաչվեց 2025թ. լավագույն տղամարդ մարմնամարզիկ:

Մարմնամարզության եվրոպական ֆեդերացիայի կողմից անցկացված քվեարկության արդյունքներով Համլետ Մանուկյանը ստացել է ամենաշատ ձայները՝ հետ թողնելով ադրբեջանցի մարմնամարզիկին: Համլետ Մանուկյանը ստացել է 1 միլիոն 30 հազար 759 ձայն (51 տոկոս), ադրբեջանցի Տոֆիգ Ալիեւը՝ 988 538 ձայն (49 տոկոս):

Քվեարկությանն ակտիվ մասնակցություն ունենալու կապակցությամբ Հայաստանի մարմնամարզության ֆեդերացիան շնորհակալություն է հայտնել երկրպագուներին:

«Սիրելի՛ հայրենակիցներ,

Շնորհակալ ենք յուրաքանչյուրիդ ակտիվ մասնակցության եւ աջակցության համար:

Ձեր ջանքերի, համախմբվածության եւ անսահման սիրո շնորհիվ Համլետ Մանուկյանը ճանաչվեց տարվա լավագույն տղամարդ մարմնամարզիկ:

Սա մեր բոլորի հաղթանակն է: Շնորհակալ ենք: Միասին ուժեղ ենք»,- գրված է ֆեդերացիայի շնորհավորական ուղերձում:

Մրցանակի համար պայքարում էին նաեւ սպորտային ակրոբատիկայի Եվրոպայի բրոնզե մեդալակիր պորտուգալացի Գաբրիել Ալբուկեկը, Եվրոպայի չեմպիոն, ադրբեջանցի Տոֆիգ Ալիեւը, սպորտային մարմնամարզության աշխարհի բրոնզե մեդալակր, Եվրոպայի փոխչեմպիոն շվեյցարացի Նոէ Զայֆերտը, սպորտային մարմնամարզության աշխարհի փոխչեմպիոն, Եվրոպայի քառակի չեմպիոն բրիտանացի Լյուկ Ուայթհաուսը:

## ՄԱՐԶԻՉԸ ՄԵԿՆԱԲԱՆԵԼ Է

Իսպանիայի չեմպիոն եւ Չեմպիոնների լիգայի գավաթակիր Մադրիդի «Ռեալի» գլխավոր մարզիչ Ալվարո Արբելոան մեկնաբանել է Իսպանիայի առաջնության 26-րդ տուրի խաղում «Խետաֆեից» կրած պարտությունը:

«Ես եմ մեղավոր եւ լիարժեք ընդունում եմ քննադատությունը: Սա միայն իմ սխալն է: Չեմ պատրաստվում մեղադրել ֆուտբոլիստներին: Նրանք մեծ ջանք գործադրեցին: Գլխավոր պատասխանատվությունն իմ վրա է: Մենք մրցակցից ուժեղ էինք, ստեղծեցինք ավելի շատ գոլային պահեր եւ արժանի էինք առնվազն մեկ գոլի: Առջեւում Իսպանիայի առաջնության 12 հանդիպում կա: Շարունակելու ենք բարելավել մեր խաղը եւ պայքարելու ենք այդ 36 միավորի համար: «Ռեալը» չի պատրաստվում հանձնվել»,-Արբելոայի խոսքը փոխանցում է Marca-ն:

Լա Լիգայի 26-րդ տուրի խաղում մադրիդյան թիմը «Խետաֆեին» պարտվեց 0:1 հաշվով: «Ռեալը» 60 միավորով երկրորդն է եւ առաջատար «Բարսելոնայից» հետ է 4 միավոր: «Խետաֆեն» 11-րդն է՝ 32 միավոր:

Հաջորդ տուրում Արքայական ակումբը կմրցի «Սելտայի» հետ: Խաղը տեղի կունենա մարտի 6-ին:

ԱՇԽԱՐՀ

## ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԹՐԵՆԴ

Nike-ը Nike Tech Fleece մարզահագուստի ամենատարածված չափսերը սպառեց ընդամենը մի քանի օրում: Նիկոլաս Մադուրոն այն կրում էր, երբ ամերիկացիները նրա հետեւից եկան:

Նոր համաշխարհային բեսթսելլեր. Nike Tech Fleece մարզահագուստի վաճառքը, որը Վենեսուելայի առաջնորդ Նիկոլաս Մադուրոն կրում էր ձերբակալվելիս եւ ձեռնաշղթաներով ԱՄՆ տարվելիս, կտրուկ աճել է նրա ձերբակալությունից հետո, եւ արտադրողի կայքը այլեւս չի առաջարկում ամենատարածված չափսերը:

Դրա խթան հանդիսացավ նախագահ Թրամփի կողմից Մադուրոյի ձերբակալությունից կարճ ժամանակ անց հրապարակված լուսանկարը: Այնտեղ հստակ երեւում է Heather Grey Nike Tech Fleece սպորտային կոշիկների զույգը: Մի քանի ժամվա ընթացքում «Just Coup It» եւ «Steal the Look» նման մեմերը վիրուսային տարածում գտան առցանց:

Որոշ բլոգերներ նույնիսկ Մադուրոյի հայտնվելը անվանեցին «հաջող ապրանքի տեղադրում» եւ «անվճար մարքեթինգ» Nike-ի համար:

Google Trends-ի տվյալներով՝ Nike Tech-ի որոնումները գագաթնակետին են հասել հունվարի 4-ին: PeakMetrics-ը հաղորդում է, որ հունվարի 3-ից 5-ը Nike Tech-ի մասին ամեն օր հիշատակվել է ավելի քան 5000 գրառումներում Platform X-ում՝ նախորդ տարվա նոյեմբերի 1-ից դեկտեմբերի 31-ը օրական 325 հիշատակման համեմատ:

Nike-ը չի մեկնաբանել իրավիճակը՝ փոխարենը խնդրելով հաճախորդներին թողնել իրենց կոնտակտային տվյալները՝ նոր ապրանքների առկայության մասին ծանուցումներ ստանալու համար: Ակնարկներում հաճախորդները հումորով նշում են դրա հարմարավետությունը, այդ թվում՝ թռիչքների համար:

## ՋԻՄ ՔԵՐԻԻՆ ՓՈԽԱՐԻՆԵ՞Լ ԵՆ

Այն ենթադրությունները, որ Ջիմ Քերին, այլ ոչ թե դերասան Ջիմ Քերին, ներկա է եղել Փարիզում կայացած «Սեզար» մրցանակաբաշխությանը, անհիմն են: Այս կարծիքը հայտնել է պրոֆիլագետ Իլյա Անիշչենկոն, որը վերլուծել է դերասանի արտաքին տեսքն ու վարքագիծը, ինչը հանրային կասկածներ է առաջացրել:

«Դա նրա վարքագիծն է, նրա ժեստերը, չնայած նրա դեմքի արտահայտությունները այդքան էլ ակնհայտ չեն: Ես այն համեմատել եմ 2014 թվականի ձայնագրության հետ, որտեղ նա խոսում է համալսարանական լսարանի հետ: Նրա ռեակցիաները, նրա շարժումները՝ նույն ամպլիտուդը: Նրա աչքերը շարժվում են ճիշտ նույն կերպ, մազերի գիծը, քիթը. ամեն ինչ կատարյալ համընկնում է: Դատելով նրա դեմքի արտահայտություններից եւ վարքից՝ այո, դա նա է», - ասել է Անիշչենկոն:

Նա նշել է, որ գլխավոր ներկայացումից հետո Ջիմ Քերիի հարցազրույցը, մասնավորապես դերասանի դեմքն ու աչքերի գույնը, մեծ կասկածներ են առաջացրել հանրության շրջանում: Այնուամենայնիվ, փորձագետը կարծում է, որ մեղավոր են տեսագրության եւ գույների շտկման վատ որակը: Նա նաեւ ենթադրել է, որ դերասանը, հնարավոր է, վերջերս պլաստիկ վիրահատություն է կատարել, ինչը կբացատրի նրա սովորական կնճիռների եւ դեմքի արտահայտված արտահայտությունների բացակայությունը:

«Ձայնը նույնպես նրանն է. եթե համեմատեք այն 2014 թվականին ուսանողների առջեւ ունեցած նրա ելույթի հետ, նույնն է: Նրա դեմքի վրա տարօրինակ ազդեցությունը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է վերջերս կատարված վիրահատությամբ», - եզրափակել է Անիշչենկոն:

*● Այսօր՝ ժամը 19:00-ին, Կ.Ստանիսլավսկու անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Աբու Լալա Մահարի» խոհափիլիսոփայական դրամա ներկայացումը:*

# ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Այն դեպքում, երբ կատարվում է ավանդի ներդրում կամ համալրում, որոնցից յուրաքանչյուրի գումարը չի գերազանցում 20 միլիոն ՀՀ դրամը, սակայն համալրման արդյունքում ավանդի գումարը գերազանցում է 20 միլիոն ՀՀ դրամը, արդյո՞ք անհրաժեշտ է Ֆինանսական դիտարկումների կենտրոն ներկայացնել պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվություն:**

*Հայկ Գրիգորյան (39 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Եթե 20 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը չգերազանցող ավանդը համալրվում է 20 միլիոն ՀՀ դրամը չգերազանցող գումարով, եւ եթե արդյունքում նույնիսկ ավանդի գումարը գերազանցում է 20 միլիոն ՀՀ դրամը, պա անհրաժեշտ չէ ներկայացնել պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի մասին հաշվետվություն: Այդուհանդերձ, նման ձեւով համալրված եւ 20 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ավանդի մարման կամ հաճախորդի կողմից գումարի ստացման դեպքում անհրաժեշտ է Ֆինանսական դիտարկումների կենտրոն ներկայացնել պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի մասին հաշվետվություն:

*ՀՀ ԿԲ*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի մասին հաշվետվություն չի ներկայացվում նաեւ այն դեպքերում, երբ նախկինում համալրված 20 միլիոն ՀՀ դրամը գերազանցող ավանդի պայմանագրի ժամկետը երկարաձգվում է:

*Էջը՝ ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ*

## ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՐՑ. Քանի՞ տարի վավերականության ժամկետով է տրամադրվում Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիրը կամ նույնականացման քարտը:**

*Ժասմինա Սուքիասյան (25 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Հայաստանի Հանրապետության կառավարության 25.12.1998թ. թիվ 821 որոշման եւ «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝

- մինչեւ 6 տարեկան քաղաքացիներին անձնագիրը տրամադրվում է 3 տարի վավերականության ժամկետով,
- 6 տարեկանից մինչեւ 16 տարին լրացած քաղաքացիներին՝ 5 տարի վավերականության ժամկետով,
- 16 տարին լրացած քաղաքացիներին՝ 10 տարի վավերականության ժամկետով,
- մինչեւ 16 տարեկան, ինչպես նաեւ 16 տարին լրացած արական սեռի քաղաքացիներին անձնագրերը տրամադրվում են մինչեւ նրանց 19 տարին լրանալը, իսկ 19 տարին լրացած լինելու դեպքում՝ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով սահմանված կարգով տրված պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման կամ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ կամ 8-րդ մասով կամ 29-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված բժշկական փորձաքննության ժամկետով: Պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության լիազոր պետական կառավարման համակարգի մարմնի դեկավարի միջնորդությամբ 18 տարին լրացած արական սեռի քաղաքացիներին անձնագիր կարող է տրամադրվել նաեւ այլ ժամկետով՝ ուսման, բուժման, մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցելու նպատակով:

*ՀՀ ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Նույնականացման քարտը 16 տարին լրացած քաղաքացիներին տրամադրվում է 10 տարի վավերականության ժամկետով՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը armenpress.am-ից*




Կոնսերվատորիայի հարակից այգին շուտով կլինի հանգստի ու հաճելի ժամանցի արդիական գոտի:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել




«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ ____________________
Ազգանուն՝ ____________________
Առաքման հասցե՝ ____________________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________________

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ




| Մարզ | Գիշեր / Ցերեկ |
|---|---|
| Շիրակ | - 8 - 13<br>0 - 4 |
| Կոտայքի լեռներ | - 7 - 10<br>0 - 3 |
| Կոտայքի նախալեռներ | - 1 - 4<br>+ 2 + 5 |
| Գեղարքունիք | - 8 - 13<br>-1 - 4 |
| Լոռի | - 7 - 11<br>+ 2 + 5 |
| Տավուշ | - 3 - 7<br>+ 5 + 8 |
| Արագածոտնի լեռներ | - 9 - 13<br>0 - 3 |
| Արագածոտնի նախալեռներ | 0 - 5<br>+ 3 + 7 |

| Մարզ | Գիշեր / Ցերեկ |
|---|---|
| Արարատ | - 1 + 2<br>+ 5 + 8 |
| Արմավիր | - 1 + 3<br>+ 7 + 10 |
| Վայոց ձորի լեռներ | - 6 - 9<br>0 - 3 |
| Վայոց ձորի նախալեռներ | - 2 + 3<br>+ 5 + 9 |
| Սյունիքի լեռներ | - 5 - 9<br>0 - 3 |
| Սյունիքի նախալեռներ | - 2 - 7<br>+ 3 + 6 |
| Սյունիքի հովիտներ | - 3 + 2<br>+ 8 + 12 |
| Երեւան | 0 - 2<br>+ 7 + 9 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **04.03.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*